



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՂՕԹԱԳԻՐԻ
ՄՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

Գ. ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ



ՅԵՐՈՒՍՏ

Ի ՏՊ. ՆԻ
ԱՌԱՔԵԼԱԻԱՆ ԱԹՈՌՈՒ
ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԻԱՆՆ

1886

243

Ա-49



3
19

2

ԱՂՕԹԱԳԻՐԲ

ԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ

ՄՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՑ

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՄՐԲԱԶԱՆ ԱՐԲ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒՈՑ

ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԱԲԵԱՆՑ

—(1886)—

3
2
7
7
4
7
7

ԱՂՕԹԱՍԵՐ ԵՒ ՋԵՐՄԵՌԱՆԴ
ԸՆԹԵՐՅՈՂ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ
ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԿԵՍԱՆՆԳՆՈՒՊՈՒՄՈՒՄ

Տ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՒՆ
ՄՐԲԱԶԱՆ ԱՐԿԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Այս անգամ այն Աղօթագիրքը հրատարակելնուս պատճառը չէ թէ Ազգերնուս մէջ Աղօթագրքի պակասութիւնն է, այլ որդէս զև Սրբազան տեղիքը շրջած ատենգերաբանչիւր տեղին ինչ ըլլալը գիտնաս և հոն կատարուած տնօրէնութեան քու անձիդ հետ ունեցած վերաբերութիւնը ճանչնաս, և այն տեղերուն աղօթքները ամփոփ շիննաս. և որ գլխաւորն է՝ մեր մարդասէր իրկչին մեզ համար ըրած երախտիքները յեննելով մարդկութեանդ պարտքը սորվիս, կրկնդ առաւելազանցութիւնը չարաւորես, ինաւորութեան մէջ պահես եւ Փրկչին ինքնայլը յարմարիս, այն Փրկչին, որ ընդանուր մարդկութիւնը մէկ զանգուած մը ներու համար աշխարհք եկաւ, և սիրոյ քանչեկ օրէնքը իւր անարատ վարքովը մեզ որվեցուց:

Ուստի այս Աղօթագիրքը գործածէ իբր
 պատմութիւն, իբր աղօթք, և իբր բարօրյա-
 կան խրատ . որոնցմէ եթէ հոգեւոր և բա-
 րօյական շահ մը ստանաս . Իուն փրկութեան
 ճամբուն մէջ կը մտնաս , Փրկչին շնորհօքը
 կը սրբուիս և Աստուծոյ արժանաւոր որդի
 կը լինիս , ես ալ իմ վարձքս ընդունած
 է՛լլամ :


ՄԱՄԲԻ ԵՓԻՍԿՈՍՈՍ
 ՄԱՐԿՈՍԵՍՆ



Մ
 ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
 Библиотека
 ՀՍՍՐ-ԱՐՄ ՍՏՐ
 38550 67



52447-Ա.Կ.
 93-42



Երեքսրբեան մի Տէրութիւն :

Օրշնեսլ ես Տէր Աստուած
 մեր , որ պարգեւեցեր ինձ այսօր
 ժամանել քու Աստուածաշրջիկ
 Տնօրինական սուրբ երկիրդ , որ
 մեր հոգւոյ փրկութեան տեղն է .
 և այժմ կեցած այս սուրբ Տա-
 ճարիս մէջ՝ եռանդուն սրտիւ
 բազկատարած մարդասէր բա-
 րերարիդ առջեւ ծունր գնելով ,
 արտասուպից աչօք կրպաղատիմ .
 դարձնւր աչքերդ վիրաւորեալ
 գերիիս վրայ , որ անչափ մեղ-
 քերու ծառայելով Աստուածա-
 յին խնամոցդ պահպանութենէն

զրկուեցայ և մեր հոգւոյ թշնա-
մւոյն ձեռքը գերի ինկայ , որ
անդթութեամբ կը տանջէ հո-
գիս և որ ըստ օրէ կը հեռացնէ
քեզմէ :

Ուստի կ'աղաչեմ բարերար
Տէր , դարձիք գէպ ՚ի մեղաւո-
րիս , ու փրկէ զիս իմ անթիւ-
մեղքերէս եւ քու ամենազօր
պահպանող աջդ հովանի ըբէ մեր
վրայ , որպէս զի կարող ըլլամք
այսուհետեւ առանց մեղաց քու
ետեւէդ դալ , ու մեզի համար
խոստացած սուրբ արքայութեա-
նըդ մէջ զՔեզ՝ Հօր և Սուրբ Հո-
գւոյն հետ փառաւորելու ար-
ժանի ըլլալ . Ամէն :





Հովիւ քաջ զանձն դնէ ՚ի վերայ սխարաց :

ԱՂՕԹԻ Բ.


ԳԼԽԱԴԻՐ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՎԲ ԱՌԱՔԵ-
 ԼՈՅՆ ՇԻՐՄԻՆ ՎՐԱՅ

ՏԵ՛Ր Աստուած բարերար եւ
 Փրկիչ հոգւոց մերոց Յիսուս
 Քրիստոս , ես անարժանս՝ քու
 խնամքովդ արժանի եղայ այս
 սուրբ երկիրս դալու , և հիմայ
 կեցած սոյն պատուական արիւ-
 նամած սուրբ Յակովբայ գլխոյն
 առջեւ , որ քուն սիրոյդ համար
 մահուան դառն բաժակը քաղց-
 րութեամբ ըմպեց . քեզ երկր-
 պագելով ՚ի խորոց սրտէ կ'աղա-
 չեմ , և որովհետեւ մեղացս բազ-
 մութեանէ չունիմ համարձակու-

Թիւն բարերարիդ երեսը նայե-
լու, ուստի սոյն երջանիկ Գլխա-
դիր Առաքելոյն բարեխօսութեան
միջոցովը կրնե՞րկայանամ՝ և ողոր-
մածիդ ոտքը ինկած գթութիւն
և շնորհք կը խնդրեմ: Կաղաչեմ
Աստուած իմ, ողորմէ ինձ ու
ներէ իմ՝ անհամար յանցանքնե-
րըս, որ սուրբ աւազանի ծնըն-
դեանս օրէն մինչեւ այս բոպէխ
քու Աստուածութեանդ առջեւ
մեղանչեր եմ. քու սուրբ շնորհ-
քըդ խրկէ ինձ և ճշմարիտ իմաս-
տութեան ջահդ իմ մտացս շնոր-
հէ՛ որ առաջնորդ ըլլայ ինձ այս
կենցաղըս վտանգաւոր ճամբոր-
դութեան մէջ, եւ չըթողու որ
քու կենսատիթ պատուիրանացդ
ուղիդ ճանապարհէն սլ և ահ-

եակ խոտորիմ, այլ անխոտոր քու
ետեւէդ գալու արժանի ըլլամ:
Աստուած իմ, ինչպէս որ սոյն
օրդին Ջեբեդեայ՝ Գլխադիր
սուրբ Յակովբ Առաքեալը և բո-
լոր արդարները քու Աստուա-
ծային սիրովդ վառեցիր, կ'աղա-
չեմ, բորբոքէ այդ սիրոյ հուրը
իմ սրտիս մէջ ալ. որպէս զի կա-
րող ըլլամ անոնց պէս աներ-
կիւղ պատերազմիլ իմ վատ կը-
րիցս բռնութեանց դէմ, եւ
քու զօրութեամբդ յաղթելով
արժանի ըլլամ յաւիտենական
վառքն ու երանութիւնները
վայելելու:

Ամենամեծ



Եւ մատուցանէին նմա մանկախոս :

ԱՂՕՒԻ Գ.

ԱՒԱԳ ՍԵՂԱՆԻՆ ԱՌՋԵԻ,
ՏԵԱՌՆԵՂԲՕՐ ՇԻՄԻՆ ՎՐԱՅ



Ո՛վ, ամենագուժ Արարիչ,
Տէր եւ Աստուած իմ Յիսուս
Քրիստոս, դուն որ մեր սիրոյն
համար մեզ նման մարդ եղար,
և մեր փրկութեան համար այս
սուրբ Քաղաքիս մէջ փրկագործ
անօրէնութիւններդ կաատրեցիր
և Աստուածութեանդ սուրբ սի-
րոյն հուրը բորբոքեցիր քեզ հե-
տեւիլ ուզողներուն սրտին մէջ,
որով զօրացած ազատ մնացին
իսլամարի իշխանութեան բռնու-
թենէն և հոգւոյն աղնութիւ-

նը աղարտող կրից ազգեցուծե-
 նէն, և յազթանակաւ հեռացան
 աշխարհէս երկնից երանութիւ-
 նը վայելելու, որոց սուրբ վա-
 բուց պատմութիւնը և մարմնոյն
 պատուական նշխարները քու
 սիրոյդ հետեւելու յիշատակներ
 մնացին մեզ զորս տեսնելով
 համբուրելով և յարգելով պար-
 տաւոր էինք անոնց պէս քաջա-
 լերուիլ ու զօրանալ և քու սի-
 րոյդ հետեւիլ ու մեղքի դէմ
 մահու չափ պատերազմիլ:

Բայց ես աշխարհային սիրով
 և անյազ սնոտի ցանկութեամբ
 կուրացած չըկրցի նկատել Աստ-
 ուածային սիրոյդ լուսաւոր շա-
 ւիղը, այլ օր ըստ օրէ մեղաց խա-
 ւարը թանձրացնելով, անել

անդունդներու մէջ գլորեցայ,
 և ելից հնարը չգտնելով կարո-
 ղութենէ ինկայ: հիմա հոգւոյս
 ստացուածքը կողոպտող աւա-
 զակին նետերէն վերաւորուած
 թուլցած, տկարացած, յուսա-
 հատած ու վհատած, մարդա-
 սէր Սամարացւոյդ գթութեան
 և ողորմութեանը կ'ըստասեմ:
 Կ'աղաչեմ, բարերար Ամենա-
 կալ Աստուած, հասիր թշուա-
 րացեալ ողորմելոյս, որ մահ-
 ուան ու կենաց մէջ անյոյս կը
 թափառիմ. շնորհաց եւ թու-
 ղութեան իւղով եւ զինիով
 պատէ անբժկելի վէրքս, յու-
 սադրութեամբ մխիթարէ զիս,
 վերջապէս կամք քե՛զ Տէր իմ,
 և անհա կը փրկուիմ:


7
 6
 5
 4
 3
 2
 1




Փարսոէ ինձմէ այս յուսա-
հատութեան և անղեղութեան
խաւարը, որպէս զի գթութեանդ
լոյսը նշմարեմ և կրիցս յաղթե-
լով դէս ՚ի բեզ գամ :

Ո՛վ բաղցր և երկայնամիտ Տէր,
Տեառնեղբայր սուրբ Յակովբոս
Առաքելոյն բարեխօսութեամբ՝
որ քու Աստուածային ճշմար-
տութեանդ համար նահատակ-
ուեցաւ, ներէ և ջնջէ անյիշա-
չար Տերութեանդ մտքէն իմ
անյիշելի մեղքերս, սրբէ կ'ա-
ղաչեմ և արգարացնը հոգիս,
որ կարող ըլլամ վայելել քու
մեղի համար խոստացած ար-
քայութիւնդ, եւ բոլոր սուր-
բերուդ հեա Ամենասուրբ Եր-
րորդութիւնդ փառաւորեմ :

այժմ և միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից . Ամէն :



Ամենայն հոգիս հարկաւ յարարեմ



Եւ այլակերպս եղև առաջի նոցա :

ԱՂՕՌԻ Գ.

Ս. ՅԱԿՈՎԲՈՅ ՏԱՀԱՐԻՆ ՄԷՁ
ՄԻՆԷԱԿԱՆ ՍԵՂԱՆԻՆ ԱՌՋԵԻ

ՏԷ՛Ր իմ Յիսուս Գրիստոս ,
դուն որ միշտ բարեաց պարգե-
ւող ես , ու չես մերժեր հաւա-
տով քեզ աղաչողաց օրինաւոր
խնդիրը , դուն որ քու մարմնա-
ւոր ծնող Արքուհի կոյս Մարիա-
մու կարօտութիւնը լեցնելու
համար լսելով անոր աղաչանաց՝
չրեշտակիդ ձեռօք մխիթարե-
ցիր . հիմա ես ալ , ո՛վ բազմա-
պարգեւ բարերար ՏԷ՛ր , յիշե-
լով քու գթութիւնդ , ամօթով
և կորագլուխ իմ անհամար մեղ-

քերուս թողութիւն կը խընդ-
րեմ, և անյիշաչար գթութեանդ
ապաւինած վստահ եմ որ կ'ըն-
դունիմ, միայն թէ ես իմ չա-
րիքներս թողում: Գուն Աստ-
ուած իմ, խոստացար մեզի որ
եթէ քեզ հաճելի բան խնդրեմք,
պիտի ընդունիմք. և գիտեմ որ
մեղաւորին ճշմարիտ դարձն ու
արդարանալը քու սուրբ կամա-
ցրդ ամենահաճելի բանն է,
ուստի ես սլ ահա հաստատուն
յուսով ճշմարիտ հաւատով իմ
արտասուուացս կաթիլները սուրբ
Աստուածածնին բարեխօսու-
թեան հետ խառնած կ'ընծայեմ
ողորմած Տէրութեանդ: Կ'ազա-
լեմ ընդունէ Աստուած իմ, եւ
անարժանութեանս մի նայիր.

չնորհէ ինձ իմ պարտքս, ներէ
անթիւ մեղքերս, մի հեռանար
ինձմէ, մի ուշացըներ քու շը-
նորհքդ, մի գոցեր ողորմու-
թեանդ դուռը, մի քողարկեր
չնորհացդ լուսոյն ճառագայթ-
ները կուրացեալ և անպատըս-
պար թշուառիս դէմ. ամենա-
ուատ կամօքդ հաճութիւն ու-
նեցիր նքթեալ թշուառիս ողոր-
մութիւն շնորհելու, Աստուած
իմ, արթուն պահապան խրկէ
իմ զգայարանացս, որպէս զի
քու խնամքովդ պատասպարուած
ամենեւին չը մեղանչեմ, որով
արժանի ըլլամ ամեն ատեն ա-
մեն տեղ զՔեզ Հօր և Սուրբ Հո-
գւոյն հետ փառաւորել՝ այժմ և
յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ :

ԱՂՕՐԲ Ե .

Ս . ԾՆՆԴԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ
ԾՆՆԴԵԱՆ ԱՅՐԻՆ ՎՐԱՅ

Ո՛վ անձաւ մարդասիրու թիւն,
 ով դիտողն բարութիւն՝ Աստուած
 իմ Յիսուս, դուն որ յաւիտենական
 անձաւելի փառացդ մէջ հոգեղէն
 զուարթնոց փառաբանութիւնը
 կ'ընդունէիր, այն անհուն
 բարձրութենէն խոնարհեցար
 այս անշաբ այրին մէջ. դուն որ
 բոլոր տիեզերքը մէկ խօսքով
 սջնչութեան խաւարէն երեւան
 հանելով ստեղծեցիր, հոս իբրեւ
 տկար մննուկ ծնար, խանձարուրով
 սպանեցար, և Մըսուրը գրուեցար.
 Մինչդեռ եր

կինք ու երկիր քու Աստուածու-
թիւնդ չէին բովանդակեր, դուն
Աստուած իմ և Տէր, այս անաս-
նոց բնակարանը խոնարհեցար,
որպէս զի զանազան մեղօք անաս-
նոց հաւասարած մարդկութիւնը
իւր բնական փառաւոր վիճակին
վերածես. որպէս զի մեղօք մեր-
կացած շնորհաց հանդերձը վե-
րբարտին հագցնես, եւ որպէս
զի սգատուիրանազանցութեամբ
զրկուած յուսոյն վրայ վերստին
հաստատես:

Արդ՝ ես մեղուցեալս ծունկի
վրայ ինկած քեզ երկրպագելով
կ'աղաչեմ, մարդասէր Տէր, ա-
զատէ զիս իմ այս թշուառ վի-
ճակէս ուր վերստին իմ չարու-
թեամբս գլորեցայ, եւ ուրկէ

ազատելու յոյս միայն դու ես:
Հահառակութեամբ, չարամոռ-
թեամբ և ատելութեամբս քու
սիրոյդ դէմ միշտ մեղանչեցի.
անթիւ մեղքերուս ծանրու-
թեամբը թշուառութեան խոր-
խորատին և անյուսութեան վը-
հին մէջ թաղուած մնացի. հի-
մայ իմ հառաչանքներս ու ար-
տասուքս Հովուաց եւ Մաքուց
ընծաներուն հետ կը նուիրեմ
մանկացեալ Փրկչիդ. կ'աղաչեմ՝
յոյս իմ Յիսուս՝ շնորհէ ինձ ալ
փրկութեան յոյսը, որով ազատ-
ուած արժանի ըլլամ երկնից
յաւիտենական փառքը վայելե-
լու, որուն համար ստեղծեցիր
մեզ. բայց մենք մեղքին հնա-
զանդելով զրկուեցանք անկէ,

այժմ, նի մանկացեալ Յիսուս ,
 Փրկիչ աշխարհի, ինչպէս այն ա-
 տեն նոյնպէս և հիմայ միշտ ա-
 պականութեան ծառայելով հե-
 ուցած եմ փրկութեան ճանա-
 պարհէն . քու մարդեղութեանդ
 արդիւնքովը դարձուր զես դէպ
 ՚ի բեղ, որ սուրբ վարքով քու
 երանելի տեսութիւնդ վայելե-
 լու արժանի ըլլամ . Ամէն .



ԱՂՕԹԻ Զ .

ՄՍՈՒՐԻՆ ԱՌՁԵՒ

ԱՆԿԱՐՈՏԻ Աստուած , դուն
 որ ամեն ճոխութեամբ և լի փա-
 ոօք թագաւորական պալատնե-
 ռու մէջ կրնայիր գալ, բայց աղ-
 քատ վիճակ ընտրելով խանձա-
 ռուրով պատեցար և այս Մսու-
 ըին մէջ դրուեցար , որպէս զի

աշխարհի անցաւոր հարստութեան յուսացող ամբարտաւաններն ամաչեցնես, որ սովրեցընես թէ մարդուն արժանաւորութիւնը հարստութեան եւ ճոխութեան, իշխանութեան և փառքի մէջ չէ, այլ սրբութեան և արդարութեան, խոնարհութեան և հեղութեան, Աստուծոյ կամքին հնազանդելուն և առաքինութեան մէջ է :

Այս Մտւորը պէտք է յանդիմաներ զմեզ որ ամեն բան ունեցած ատենն իս դարձեալ դրժգոհ եմք . պիտի խրատէր, որ մեր հարստութիւնն ու աւելորդը քու կամքիդ գործածենք և կարեւորութիւն չըտանք անոնց : Բայց մենք ընդհակառակն, ազա-

հուժեամբ և աւելորդ ցանկութեամբ անիրաւեցանք, զրկեցինք, հպարտացանք ու մեր աւելորդներովը զեղծանք, վայելչութեանց մէջ հոգւով ու մարմնով մաշուեցանք, թուլցանք ու մեղքին դէմ տկարանալով յաղթուեցանք :

Այժմ այս սուրբ Այբիս մէջ այս խեղճ Մտւորին առջեւ ամօթահար կանգնած կ'աղաչեմ ու կը պաղատիմ, տուր ինձ ալ այն շնորհքը որ աղքատութեան համբերել գիտնամ և աւելորդ ինչքը քու հաճոյիցդ գործածելով երկնքին մէջ դանձել կարողանամ. եւ հոն զՔեզ ժառանգելու արժանի ըլլամ. Ամէն :



Հայր անցի զբաժանի զայս յինն :

ԱՂՕԹԻ Է .

ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՑԷՉԻՆ ՄԷՋ
ԳՐԻՍՏՈՍԻ ԱՂՕԹԱԾ ՏԵՂԸ

ԱՆԿԱՐՈՏ և ամեն բանի կարող
Աստուած եւ Տէր իմ Յիսուս ,
այս սոսկալի գիշերը սուրբ Ափօն
Վերնատան մէջ խոնարհու-
թեամբ Առաքելոց ոտքերը լուա-
նալէդ՝ և վերջին ընթրիքը կա-
տարելով կենարար Մարմնոյ և
Արեանդ սուրբ Խորհուրդը ա-
ւանդելէդ վերջը , Առաքելոցդ
հետ մէկտեղ այս պարտէզը եւ
կար , և հոս երեսի վրայ ինկած
կաղօթէիր առ Հայր եւ անոր
կամքը կը խնդրէիր և մեր փր-
կութիւնը կը հոգայիր , փորձու-

Թեան մէջ չլինալու համար քու օրինակովդ մեզի աղօթք ընել կը սորվեցնէիր: Բայց ես աշխարհային աւելորդ հոգերով զբաղած և հեշտութեան քնով ծանրացած միշտ կը հեղգամ աղօթք ընելու:


Գուն Աստուած իմ բարեգութ, շատ անգամ բանիւ եւ գործով ուսուցիր ինձ որ աղօթեմ և քու կամքդ ու արքայութիւնդ խնդրեմ, իսկ ես կամ բնաւ չեմ աղօթեր և կամ եթէ աղօթեմ, այն ալ չէ թէ քու կամքդ, այլ իմ հաճոյքս կը խընդրեմ: Ուստի կ'աղաչեմ, Աստուած իմ Յիսուս, մաքրէ զգալութիւններս, սրբէ ու լուսաւորէ մտքս որ սուրբ կամացդ

համեմատ աղօթել գիտնալով՝ արժանի ըլլամ խնդիրքս ընդունելու:

Գուն Տէր իմ Յիսուս, մեզի համար արցունք և արեան քրտինք թափեցիր. իսկ ես իմ ընկերիս բարեացը համար փոքրիկ աշխատութիւն մը չըրի, թշուառին մխիթարութեան հոգ ու խնամք չըտարի, իմ բոլոր մարդկային պարտաւորութիւններս մոռացայ, խըղճիս ծանրութեամբը բեռնաւորված աստանդական անմխիթար կը շրջիմ: Հիմայ Տէր իմ Յիսուս, հոս քու աղօթած ու մխիթարութիւն ընդունած տեղդ եկած՝ երեոի վրայ ինկած արտասուօք եւ հառաչանօք կը պաղատիմ, ողորմէ թշուառիս,

Ե մխիթարէ զիս . կամքդ միայն
կը խնդրեմ Աստուած իմ, ինչու
որ դու մեղաւորին կորսուիլը
չես կամիր . ուստի եթէ քու
քարետէր կամքդ իմ վրայ դառ
նայ . յայնժամ ես փրկուած ու
երջանիկ կ'ըլլամ , որով զՔեզ
օրհնելու արժանաւոր կ'ըլլամ ,
թէ այս և թէ յաւիտենական
կենաց մէջ :





Համբուրելով մասնեա զՈրդի մարդոց:

ԱՂՈՐԲ Ը:

ԴԱՐՁԵԱԼ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՄԷՋ
ԲԻՒՍՈՍԻ ԲՈՒՆՈՒԱԾ ՏԵՂԸ

ՈՂՈՐՄԱԾ, զԹած և մարդասէր
Տէր, քանի որ Կեդրոնեան ձու-
րին այս կողմն անցած՝ մեր փր-
կութիւնը հոգալով կ'աղօթէիր,
յանկարձ Յուդային առաջնոր-
դութեամբը զինուորներու բազ-
մութիւն մը սուսերով և զէն-
քերով գքեղ պաշարեցին, աւա-
զակի վրայ յարձակելու պէս
բռնեցին, եւ յանցաւորի պէս
կապեցին որ դատաւորներու
ներկայացընեն:


Այս ցաւալի վայրկենին մէջ
Պետրոս Առաքեալը իւր սիրայն
սաստիկութեամբը Բահանայա-

պետի ծառային ականջը կորեց :
Իսկ դուն, գթառատ Տէր, խո-
նարհութեամբդ վրէժխնդրու-
թիւնը յանդիմանելու համար
անոր մօտեցար եւ կտրուած
ականջը բժշկեցիր : Ո՛հ, ի՛նչ
քաղցրութիւն և ի՛նչ ներողա-
մտութիւն, որ կամաւ զինուոր-
ներուն յանձնուեցար, որ քու
վրայ եկողին և զբեզ նախատո-
ղին ականջը բժշկեցիր, եւ որ
Յուդայի նենգաւոր համբուրիւ
զբեզ մատնելու ատեն՝ ապաշ-
խարութեան հրաւիրեցիր, և այն
դառն գիշերուան մէջ գթու-
թիւն ու մարդասիրութիւն գոր-
ծեցիր, իմ տմարդութիւնս եւ
անզգամութիւնս յանդիմանելու
համար :

Իսկ ես, Աստուած իմ, շատ
անգամ քու սուրբ սիրոյդ հա-
կառակ փոքր զրկանքներու չը
համբերելով չարիք խորհեցայ,
վրէժ առնելու աշխատեցայ,
կրիցս հետեւելով գաղանացայ
և գթութիւնը մոռացայ, իրա-
ւունքը անիրաւութեան՝ ճշմար-
տութիւնը ստութեան մասնե-
ցի, որով չար Յուդային համա-
կերպած եղայ :

Սակայն հիմայ, Աստուած իմ,
տեսնելով և յիշելով քու անչափ
սիրոյդ պատճառաւ եւ ճշմար-
տութեան համար կրած անտա-
նելի նեղութիւններդ, ամաչե-
լով իմ չարեացս և աններող վատ
բնութեանս վրայ, զղմամբ եւ
արտասուօք Բարերարիդ սոբբ

ինկած՝ թողութիւնն կը հայցեմ.
այս քարերուն և հողերուն վրայ,
ուր քու ստրերդ կսխեցին, դառն
արտասուք թափելով գթու-
թիւնդ կը խնդրեմ, և կ'առա-
ջադրեմ որ անգամ մ'ալ քու
կենաց առաջնորդող ճանապար-
հէդ չը շեղեմ, որով արժանի
ըլլամ քու անձառ սէրդ վայե-
լելու . Ամէն :



ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ՎԱՆԲ,
ՈՐ ԱՆՆԱՒԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՏՈՒՆՆ Է
ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ԲԱՆՏԸ




Իբրեւ 'ի վերայ աւաղակի՞ ելիք
սուսերօք և բրօք :

Ո՛հ, անճառելի է քու մարդասիրութիւնդ Աստուած իմ Յիսուս, սակայն սոսկալի է նաև մարդկան անգթութիւնն ու ապերախատութիւնը. վասն զի դու անմեղ գառի նման հեղութիւն ու խոնարհութիւն կը ցուցունես, անոնք վայրենութիւն եւ գաղանթութիւն կ'ընեն. հերիք չեն սեպեր սուրբերով և բիրտրով անպարտականիդ վըայ գալ և բռնելը. այլ դատաւորներու մատնելով մեռցնելու եւս կ'աչ

խառն , կը սարսափիմ և կը դու-
զամ քանի որ կը յիշեմ՝ թէ հոս
Աննա ֆահանայապետին առջեւ
դատուած միջոցիդ՝ անոր ծա-
ռայն , որուն երեսուն և ութ
տարուան անդամալուծութիւնը
բժշկեցիր , չ'ստակարով քու Աս-
տուածային պատկառելի դէմ-
քէդ և չամաչելով իրեն ըրած
երախտիքէդ , յանկարծ սատոյիկ
ապտակ մը կը զարնէ : Իսկ դու ,
նվ անճառ խոնարհութիւն , դու
չը պատմեցիր զինքը . այլ իմ
փրկութեանս համար համբե-
րեցիր . բայց ես ապաշնորհ թը-
շուառս քու սիրոյդ և բուն իսկ
իմ օգտին համար՝ բնաւ իմ կա-
մայս բռնութեանց համբերե-
լով կրկնս յաղթած չեմ , միշտ

իմ նողկալի մեղքերովս , նմա-
նեացս հետ ունեցած ատելու-
թեամբս այն չար ծառայէն ա-
ւելի քու բարերար սիրող վըշ-
տացուցած եմ :

Բայց հիմայ մեղուցեալ ան-
ձովս այս սոսկալի տեղը գետին
խնկած՝ Բարերարիդ ոտքը համ-
բուրելով թողութիւն կը խընդ-
րեմ , և մարդասիրական գթու-
թեանդ վրայ վստահացած՝ կը
հաւատամ որ մեղաց թողու-
թեան հետ համբերութիւն եւ
ժուժկալութիւն ալ պիտի ըն-
դունիմ , որով կենացս մէջ առա-
քինութեամբ եւ սրբութեամբ
ապրելով , արժանի պիտի ըլլամ
քու սուրբ տեսութեանդ յա-
ւիտեանս . Ամէն :



Այդպէս պատասխանի տաս
Քահանայապետիդ :

Ո՛վ Փրկիչ իմ Յիսուս Քրիստոս, ի՛նչ անձառելի մարդասիրութիւն է այս, որ փառացի աթոռէն խոնարհեցար և մարմին զգեցար, որ մեղաւորիս հոգւոյն փրկութեանը համար սուկալի տանջանքներ կրել հաճեցար, որ կամաւ յանձնուեցար քու վրայ եկող զինուորներուն, որ երբէք չը հակառակեցար զանոնք հարածելով, այլ հըլութեամբ հոս Աննա Քահանայապետին առջեւ դատուելու եկար :

Բայց ի՛նչ դատաստան, ո՞վ անզղամութեանս, անպարտ տե-

ղը առանց վնաս մը գտնելու ,
 քեզմէ բժշկուող երեսուն եւ
 ութ տարուան անդամալոյծը աւ
 սերախտութեամբ քու Աստ-
 ուածային պատկառելի դէմքիդ
 զարնելու կը յանդգնի . որուն
 այս չարութիւնը սկիզբէն գիտ-
 նալով հրամայեցիր որ երթայ
 ու ալ չը մեղանչէ , բայց ինքը
 մոռնալով քու պատուէրդ եւ
 խաղառ ուրանալով ըրած բարե-
 ըարութիւնդ , այն ստակալի սը-
 խուր գիշերը յանդգնեցաւ այս
 չարիքը հատուցանել երախ-
 տեացդ փոխարէն , իսկ դուն
 համբերեցիր որպէս զի մենք ալ
 աշխարհիս մէջ բարեաց փոխա-
 րինութիւն չ'սպասեմք , և վրէժ-
 խնդիր չը լինիմք :

Սակայն ահա ես թշուառաց-
 եալ գերիս ալ ճիշտ այն չար
 ծառային նման , քու անչափ եւ
 բախտիքներդ մոռնալով և սիրոյ
 պատուէրդ չը միշտելով , ընկերիս
 հետ ունեցած վաս ընթացքովս
 բարերար Տէրդ միշտ վշտացու-
 ցած եմ : Ուստի հիմայ այս սուրբ
 բանտիս մէջ երեսանկեալ կ'ա-
 ղաչեմ , ո՛վ Աստուած ողորմու-
 թեան , գթա՛ մեղաւորիս թըշ-
 ուառութեանը վրայ և օգնելով
 տկարիս՝ հրաման տուր ետեւէդ
 գալու : Իմ փրկութիւնս օր օրի
 մի ձգեր մարդասէր Տէր , կ'ա-
 ղաչեմ . գթութիւնդ կը խնդրեմ .
 փութա՛ Տէր իմ , որ մեղքերուս
 բեռները չը ծանրանան վրաս և
 զիս յուսահատութեան մէջ ձը-

գելով քու անձառ տեսութե-
նէդ չքորկեն . առ իս դարձիր
գթած Տէր, նայէ աղեխարչ հա-
ռաչանքներուս ու քու սրբու-
թեան աթոռէդ քաղցր աչօք
նայէ քու անարժան ծառայիդ
վրայ, ջնջէ կ'աղաչեմ, և մի յի-
շեր իմ անառակ վարքս՝ որով
զքեզ վշտացուցի, քու չարչա-
րանացրդ արեամբը փրկուած
զերի մի եմ, մի զրկեր զես քու
Աստուածային տեսութենէդ,
որ ես ալ զքեզ փառաւորելու
արժանի ըլլամ. Ամէն :




Բո՛հ է ինչ որ աստուծոյն արարածն է

ՍՈՒՐԲ ՓՐԿԶԱՅ ՎԱՆԲ
ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՉ
ՈՐ ԿԱՅԻԱՓԱՅԻ ՏՈՒՆՆ Է



ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՏԷՐ, ԵՐԲ այս
սոսկալի անդը ծունկի վրայ եկած
քու անչափ մարդասիրութիւնդ
կը յիշեմ, երկիւղիւ և սարսափով
կ'սլաշարիմ. վասն զի Աննա
Քահանայապետին տունէն նախա
տաննօք հոս կայիափայլին բե
րին, որ արդարութեամբ դա
տուիս: Ո՛վ կուրութեան մարդ
կան, հարցուցին՝ ճշմարտութիւն
լսելու, և երբ քու Աստուածա
յին բերնովդ ճշմարտութեան
վրայօք խօսեցար, Քահանայա



ԱՅԻՆ և մուծին 'ի տուն Քահանայապետին:

պետը բարկութեամբ լցուած
իւր հանդերձը սրտուեց :

Սակայն Տէր իմ, հիմայ կը
մտածեմ որ ետ ալ շատ անգամ
թէ գիտութեամբ եւ թէ ան-
գիտութեամբ ճշմարտութեան
դէմ ականջ գոցած եւ իրաւուն-
քը անիրաւութեան փոխած եմ :
Կը յիշեմ նաեւ որ քանի ան-
գամ քու սուրբ օրինացդ հա-
կառակը գործելով արդարու-
թեան, սրբութեան եւ անմե-
ղութեան հանդերձս սրտա-
ուելով մեղաց ազտերուն մէջ
հոգիս ապականած եմ : Կը յի-
շեմ որ հեշտութեան բաժակով
գինովցած՝ կամայցս զգայական
անզուսպ բաղձանաց հետեւե-
լով՝ խղճիս արդար սպահանջ-


մանցը դեմ գործած եմ, միշտ
կրիցս հետեւելով եւ քու սուրբ
սիրոյդ յիշատակը խոպառ մու-
նալով, Պետրոսի նման ուրա-
ցութեան եւ Կայթակղութեան
վիհը գլորած եմ : Եւ այսպէս քու
լոր չարիքս ու մղութիւններս
յիշելով՝ խղճիս խայթերովը կը
խոցստիմ : Վայ իմ թշուառու-
թեանը, հոս այս բանտին մէջ
քեզի տուած նեղութեանց,
տանջանաց եւ ծաղրաբանու-
թեանց ամենքն ալ իմ չը յիշուե-
լու զանազան մեղքերովս կա-
տարած եմ : Արդարեւ անար-
ժան եմ կենաց, անարժան եմ
քու շնորհացդ, վասն զի անար-
ժան գանուեցայ մարդկութեան,
եւ ինչպէս որ հարկը կը սպահան-

Եր, ընկերս չք սիրեցի : Ահա
քիչ մնաց փրկութեան յոյս բռ-
լրովին պիտի կտրէի, եթէ հոս
Պետրոսի ուրացութիւնը, զղ-
ջումը և թողութիւն ընդունելը
չք յիշէի : Այո՛, Աստուած իմ,
քու մէկ սիրոյ եւ գթութեան
նայուածքդ թափանցեց անոր
օրաին խորը, և զգաց իւր չարա-
չար կործանումը, ուստի դուրս
ելնելով սաստիկ զղջմամբ ար-
տասուեց, եւ խոստացաւ քեզ
հետեւելու :

Արդ՝ առատագութ Տէր, կ'ա-
ղաչեմ, նայէ՛ թշուառ մեղաւո-
րիս վրայ ալ. ողորմէ ապերախ
տիս և բարեգործութենէ զուրկ
խղճալոյս, կը խնդրեմ, թողու-
թիւն շնորհէ իմ անհամար մեղ-

քերուս, և քու սուրբ շնորհքդ
խրկէ որ ալ հեռանամ չարքե-
ներէ և անարատ վարքով քու
սուրբ փառքդ տեսնելու ար-
ժանի ըլլամ. Ամէն :





Դու և Թագաւորն Հրէից :

ԱՂՈՐԻ ԺԲ.

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐՐՈՐԴԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՁ՝
 ԱՐ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՊԱՐԱՆԲՆ Է

ՓԱՌԱՅ ՏԵՐ , դուն որ երկնի
 և երկրի արարիչ Աստուածն ես ,
 ինչ գթութիւն , ինչ հեզո-
 թիւն և ինչ մարդասիրութիւն
 է այս՝ որ քու ձեռագործիդ սի-
 րոյն համար անոր ապերախտու-
 թեան այցալի համբերեցիր :
 Դուն՝ որ Թագաւորաց Թագա-
 ւորն ես , եւ մէկ ահնարկու-
 թեամբ ամեն բան ոչնչացրնե-
 լու կարող , ո՛հ , իբրեւ տկար
 մէկը՝ կը տանիս մարդկան նա-
 խատանաց :

Հոս Պիղատոսի պապատին մէջ
յանցանք մի չը գանալէն վերջը ,
անպարտ տեղը կը տանջուին ու
չես խօսիր . Թագաւորական Թա-
գի տեղ փուշով կը պսակին ու
կը համբերես . տիեզերախնամ
աջի անարգ եղեգէ գաւազան
կ'ընդունին և չես սաստեր : Հա-
ղար անարգութեամբ Աստուա-
ծային սիրագ վերաւորեցին եւ
դու լուռ ու մունջ կեցած ճըշ-
մարտութիւնդ սիրով՝ բան թէ
բռնութեամբ տարածելու հա-
ճեցար , որպէս զի օրինակովդ
զմեզ խրատես և մէկզմէկ սիրե-
լու վարժեցնես :


Բայց ես , սիրոյ և գթութեան
անարժան թշուառս , իմ ընկե-
րիս մէկ ծանր խօսքին անգամ

չեմ համբերած . կամքս և վատ
կիրքս յառաջ տանելու համար
ամեն բան զոհած եմ . Իսկ սե-
րոյդ և առաքինութեան համար
փոքրիկ զոհողութիւն մը անգամ
չեմ ըրած : Սրբութիւն , արդա-
րութիւն , առաքինութիւն , կը
բօնք եւ ամեն նուիրական բան
արհամարհած ըլլալով՝ իսպառ-
վատթարացած եմ , և մարդկու-
թեան կարգէն հեռացած շնչա-
ւորներուն հաւատարած եմ . բա-
նական կարողութիւնս՝ զոր իբր
գերագոյն շնորհք մեզի պար-
գեւեցիր , չարաչար գործածե-
լով՝ բարին եւ օգտակարը , գե-
ղեցիկն ու վայելուչը չ'որոշելով ,
մոլութեանց մէջ տկարացուցի :
Հիմայ՝ Տէր իմ Յիսուս , զգա-

լով իմ ընթացքիս գեշութիւնը
 և ճանչնալով գործոցս վատթա-
 րութիւնը, կը զգուիմ անոնցմէ .
 նոյն իսկ ես ինձմէ գարշելով
 չեմ համարձակիր քու սրբու-
 թեանդ ստից մերձենալ : Սա
 կայն գթութեանդ ապաւինած
 կ'աղաչեմ, մարդասէր Տէր ,
 փրկագործ չարչարանացդ ար-
 եամբը ներէ ինձ իմ բոլոր մեղ-
 քերս : Ահա՛ ամօթապարտ կե-
 ցած արդար Գառաւորիդ առ-
 ջեւ՝ այլ չմեղանչելու խօսք կու-
 տամ. ինչու որ գիտեմ թէ ա-
 ռանց իմ զղջմանս թողութիւնն
 չեմ գտնար : Ահա բոլորով սրբ-
 տիւ զղջալով կը ջանամ մարդ-
 կային տկարութեանս ներածին
 չափ զգուշանալ քու շնորհացդ

ապաւինելով, եւ կատարեալ
 յուսով թողութեան կ'ըսապ-
 սեմ, որպէս զի սրբութեամբ
 զՔեզ փառաւորելու արժանի
 ըլլամ. Ամէն :





Կապեցին զնա և ձաղեցին :

ԱՂՕԹԻ ԺԳ.

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ
ՔՐԻՍՏՈՍԻ ՉՈՐՐՈՐԻ ԲԱՆՏԸ



Ա՛ՍՏՈՒԱԾ իմ Յիսուս ֆրիտոսս,
մարդկային մտքէ վեր է քու
համբերութիւնդ՝ որ հոս այս
խաւար բանտին մէջ ալ հեղու-
թեամբ հաճեցար մնալ պահակ-
ներու հրակողութեան տակ .
ինչ էր քու յանցանքդ Տէր իմ
Յիսուս : Ո՛հ , անմեղանչելի բը-
նութիւնդ չէր կրնար մեղան-
չել . բայց մարդկանց մեղքերը
յանդիմանելուդ և ճշմարտու-
թեամբ ու արդարութեամբ
վարուելուդ համար մոլորեալ


մարդկանց առջեւ յանցաւոր սեպուեցար : Թշուառին կարելից եղար , կեղծաւորութիւն ու անաչառութիւն չըրիր , անոր համար մեղաստէր աշխարհը ըզքեզ ատեց , և անոր արբանեակներն այսբան դառն տանջանքներու մատնելէն վերջը՝ հոս այս տխուր բանտին մէջ զքեզ արգիլեցին , մինչեւ վերջին մահառիթ տանջանացդ գործիքները պատրաստեն :


Ո՛հ , ի՛նչ ապերախտութիւն է իմ ըրածս , որ չը ճանչնալով քու ինձ համար ըրած բարիքներդ , իմ փրկութեանս համար կրած անտանելի տանջանքներդ , եւ իմ երջանկութեանս համար դրած քաղցր օրէնքներդ , չա-

րաչար մեղանչեցի : Կենսառիթ պատուիրանացդ դէմ յանդընեցայ . անձառելի սիրոյդ՝ ատելութիւն փոխարինեցի . անմտութեամբս , ծուլութեամբս և մեղկութեամբս թշուառութեան մէջ ինկայ , յուսահացայ , եւ Նախախնամութեանդ դէմ մեղանչեցի բամբասանօք , դժգոհութեամբ եւ անմիտ չարաբանութեամբ , անմահ հոգիս վերաւորեցի և Բարերարիդ սիրտը վշտացուցի : Կ'ազաչեմ Տէր իմ Յիսուս , և խնդրեմ արտասուարից հեծութեամբ , ակնարկ մը ձգէ վրաս , և ահա՛ կը սրբուիմ : Հաւատով , յուսով , և սիրով ոտքդ ինկած՝ իմ չարիքներս կը խոստովանիմ , և քեզ

մէ թողութիւն կը խնդրեմ :
 Մի զանար ինձմէ այս շնորհքը .
 մի անտեսեր իմ աղաչանքներս .
 գթութիւն և ողորմութիւն կը
 հայցեմ մարդասիրէդ : Թէ որ
 արդարութեամբ դատես , ար-
 դէն դատապարտուած եմ . շը-
 նորհք է խնդրածս Տէր իմ ,
 և քու մարդասիրական գթու-
 թեանդ ապաւինած կը յուսամ
 որ կ'ընդունիմ . և կը խոստա-
 նամ այսուհետև որ քու սուրբ
 օրինացդ համեմատ մարդավա-
 յել ընթացքի մէջ գտնուիմ :
 Իմ նմաններս սիրեմ , թշնամույս
 ձեռքէս եկած բարիքը ընեմ ,
 որպէս զի քու սուրբ սիրոյդ
 հրովը բորբոքած՝ քեզի արժա-
 նաւոր վարքով յաւիտենակա-

նութեան մէջ զՔեզ փառաւո-
 րելու արժանի ըլլամ . Ամէն :





Եւ եղին 'ի գլուխ նորա սրակ 'ի իշոց :

ԱՂՕՌԻ ԺԳ .

Ս . ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ
ՀԱՆԴԵՐՁ ԲԱԺԱՆՄԱՆ ՏԵՂԸ



ԱՍՏՈՒԱԾ իմ, ինչպէս որ քեզ
տանջող զինուորները հաս քու
հանդերձդ բաժնեցին , անանկ
ալ մարդկային բնութեան նախ
կին թշնամին իմ հողւոյս շնոր
հաց , անմեղութեան և սրբու
թեան հանդերձը կողոպտելով՝
ղիս մերկ ու անպատսպար թա
ղուց , արդարոց և սրբոց առջեւ
զիս խայտառակ բռաւ :


Որովհետեւ Տէր իմ, ես յօժ
ժարութեամբ կամացս զգայա
կան բաղձանաց հետեւեցայ և

անչափաւ որ կրիցս անձնատուր
 եղայ , եւ հոգւոյս պիտոյքը
 զանց ըրի , վիճակաւ որոշուեցայ
 և տարտարոսին յաւիտենական
 տանջանաց բաժին ինկայ . վասն
 զի մոռացայ գթութիւնը , թո
 զի մարդասիրութիւնը , հեռա
 ցայ առաքինութենէ , և զրկե
 ցայ բոլոր երկնային շնորհք
 ներէն :

Արդ՝ Աստուած իմ, դարձնուր
 աչքերդ դէպ ինձ , և կարեկ
 ցութեամբ նայէ վրաս . հազ
 ցուր ինձի վերստին Քու շնոր
 հացդ հանդերձը , որպէս զի մո
 լութեան ցուրտէն և հեշտու
 թեան սոթէն պատասպարուած
 գէշ ազդեցութիւններէ ազատ
 մնալով քո սուրբ և հանդիստ

երկնաւոր բնակարանդ մտնելու
 արժանի ըլլամ . Ամէն :





Եւ հանին զնա 'ի Խաչ :

ԱՂՕԹԻ ԺԵ .

Ս . ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՉ

Ս . ԳՈՂԳՈԹԱՅԻ ՎՐԱՅ

ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ԱՌՉԵԻ



Ո՛վ անհունչ սէր , ո՛վ աղբիւր
անսպառ սիրոյ . ի՛նչ երեսով ե
ի՛նչ համարձակութեամբ այս
սարսափելի տեղիս մերձենամ .
Ի՛նչպէս յիշեմ քու անձառ մար-
դափրութիւնդ ու չը պատկա-
ռիմ : Ո՛հ , Աստուած իմ , հոս
Գողգոթայ լերան գլուխը խաչա-
փայտին վրայ զՔեզ տարած
ուած տեսնել , արարչագործ
ձեռքերդ ու ոտքերդ բեւեռ
ուած նկատել , եւ այս ամենը

ինձ նման ապերախտ մեղապարտի մը համար ըլլալը գիտնալ և վայրկեան մը չը պատկառիլ եւ չը սոսկալ անհնարին է . թմրած զգացում մի և քարացած սիրտ մի պէտք է որ այսչափ սխրալի մարդասիրութեանդ վրայ չը դաժի և իւր ասիրատութենէն չը դառնայ :

Ո՛վ Աստուած իմ, Աստուած գթութեան, Աստուած սիրոյ և ողորմութեան . ի՛նչ ըսեմ, ի՛նչ խօսիմ որ լեզուս կասուած ջրթունքներս չեն շարժիր . սարսափած կեցեր եմ այս ահարկու տեսարանէս : Դուն Արարիչ բնութեան, դուն արարածոցդ ձեռք հոս Խաչի աշտարակին վրայ բարձրացար, որ-

պէս զի իմ բժժուած աչքերս զքեզ տեսնեն . բարձրացար այս քառաթեւին վրայ, որ իմ բարձրացած ամբարտաւանութիւնս խոնարհեցնես, լեռնացեալ կիրքերս ցածցնես և իմ մեղք խոնարհած հոգիս բարձրացնես : Աստուածային բազուկներդ տարածած կարօտեալ հօր մը նման մարդկութիւնը գիրկդ կը հրաւիրես, որպէս զի մեղաց աշխատութենէն փրկես ու հանգրստացնես . անսարտական արիւնդ յերկիր կը հոսես, որպէս զի այս վրէժխնդրութեան զոհարանէն՝ գթութեան, սիրոյ և ողորմութեան պտուղ բուսցնես :

Սակայն, աւանդ իմ կուրու-


Թեանս , որ այսքան շնորհաց
յարգը չը ճանչցայ , այս գերա-
գոյն բարեաց արժէքը բանի
տեղ չը դրի , մեղացս բեռները
ծանրացուցի , և փոխանակ դէս
'ի քեզ սլանալու՝ առջիս բաց-
ուած Թշուառութեան և ապա-
կանութեան խորխորատը գլո-
րեցայ : Գունն անճառելի սիրով
քու անձդ մեր փրկութեան
համար պատարագ մատուցիր .
բացես իմ նմանեացս իրաւուն-
քը իմ օգտիս զոհեցի : Գունն
իրարմէ բաժնուած մարդկու-
թիւնը միացնելու համար Գող-
գոթայ լերան փրայ երկու աւա-
զակաց մէջ իբրև յօդ խաչեցար :
Սակայն ես կամօք հրաժարեցայ .
աջակողմեան աւազակը իբր բա-

րեսիրաց փոխանորդ , ճանչնա-
լով իւր յանցանքը՝ կրած պատ-
ժոյն արդարութիւն ըլլալը խոս-
տովանեցաւ , եւ քու անպարտ
ըլլալուդ վկայեց , որով դրախտին
մէջ մտնելու հրաւերին արժա-
նացաւ . իսկ ձախակողմեան ա-
ւազակը ինձ նման անպատկառ
գողոռոյներուն փոխանորդը , ա-
ռանց իւր չարիքը ճանչնալու
եւ առանց քու կարողութիւնդ
խոստովանելու՝ փրկութիւն կու-
զէր , որով շնորհացդ լոյսէն
զրկուած իրեն վայելուչ տեղը
գնաց :

Արդ՝ Աստուած իմ , խաչիդ
պատուանդանին առջեւ ինկած ,
ամօթոյս վեր նայելու չեմ հա-
մարձակիր . խնայէ՛ ողորմելոյս

եւ շնորհէ ինձ ալ այն երջան-
կառիթ ձայնը լսելու թէ՛ «Ս.Ս.
սօր ինձ հետ դրախտին մէջ պի-
տի ըլլաս » . որպէս զի հոն ըզ-
բեզ միշտ փառաւորեմ :





Ինչոցեալ զնա պատեաց կտաւովք :

ԱՂՕՐԻ ԺԶ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ
ՊԱՏԱՆԱՏԵՂԻՈՅՆ ՎՐԱՅ


ԲԱՐԵԱՅ պարգեւող և շնորհաց բաշխող Տէր իմ Յիսուս, Խաչափայտին վրայ մարդկան ազգի փրկութեան ծարաւը բաշխելով, և անոնց ապերախտութեան դառն քայցախն ըմպելով՝ անմահ Հոգիդ Հօր Աստուծոյ աւանդեցիր : Արեմաթացի արդար ու պարկեշտ Յովսէփն ալ զՔեզ իբրեւ շնորհք՝ Պիղատոսէն խնդրեց, ընդունեց և խաչէն իջեցընելով մաքուր կտաւով խունկով և իւղով պատեց :

Այո՛, Աստուած իմ Յիսուս, դուն այս ամենը յանձն առիր կամաւ եւ յօժարութեամբ, որպէս զի չարին հրապուերանօք մեղօք պատած հոգիս՝ քու շնորհացդ լուացարանին մէջ սրբես մաքրես, անմեղութեան իւղովը օծես, եւ փառացդ լուսաւոր հանդերձով զարդարես: Բայց ես իմ յօժարութեամբս անմաքար փախայ, և մոլութեանց լեռներուն մէջ կորսուեցայ, ու քաջ Հովուիդ խնամքներէն զրկուեցայ:

Ուստի, Բարերար Տէր, կ'աղաչեմ, շնորհք ըրէ վերստին և այցելութեան ելիր մոլորեալ ոչխարիս. ազատէ զիս իմ չարիքներէս, եւ դարձեալ դէս

ի քու երկնաւոր փարախդ առաջնորդէ որպէս զի հոն ըզբեզ միշտ փառաւորելու արժանի ըլլամ. Ամէն:





Զէ սոս քանզի Յարեաւ :

ԱՂՕԹԻ ԺԷ :

Ս • ՅԱՌՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՁ
ԿԵՆՍՍՏՏՈՒ Ս • ԳԵՐԵՁՄԱՆԻՆ ՎՐԱՅ

— — — — —

ՄԵՆԴ ԲԱՍՈՒԼԱԾ , անպարագրելի բնութիւն եւ անխնանալի զօրութիւն , վերջապէս հաճեցար սոյն անձուկ Գերեզմանին մէջ ամփոփիլ , որ անդնդոց մէջ խորասուզած հոգիս երկինք վերածես : Մատանեաւ կնքեցար , որպէս զի Բասուլաճային զօրութիւնդ կուրացեալ աչքերու ջրցունես . զինուորներու պահպանութեանը յանձնուեցար , որպէս զի ինքնազօր Յարութեամբդ աշխարհի անհատուութիւնը յանդիմանես , անա-

րատ եւ անապահան մարմնովդ
երեք օրէն վերջը ինքնիշխան
զօրութեամբ և լուսով Աստուա-
ծութեանդ Գերեզմանէն ելար
և մարդկան ազգի հոգին թշուա-
ռութեան և տանջանաց խորխո-
րատէն ազատեցիր :

Աստուած իմ Յիսուս, ապա-
շնորհ մեղաւորս չը գիտնալով
Քու մարդասիրութեանդ չափը,
չը ճանչնալով երախտեացդ մե-
ծութիւնը, անմտացայ, հեռա-
ցայ, որոշեցայ և շնորհացդ լոյ-
սէն ու յաւիտենական երանու-
թենէն զրկուեցայ : Հիմաց, հոս
Աստուած իմ, Քու կենսատու
սուրբ Գերեզմանիդ վրայ անար-
ժանութեամբ ծունկի վրայ ին-
կած՝ կ'աղաչեմ և կը պաղաւտիմ :

Թողութիւն շնորհէ իմ անթիւ
չարեացս, և մի յիշեր սիրոյ պա-
տուիրանիդ դէմ գործած մեղ-
քերս : Գիտեմ Աստուած իմ,
որ եթէ ուզես՝ կարող ես զես
սրբել, մաքրել և յանարգութե-
նէ 'ի փառս վերածել : Բայց
գիտեմ նաեւ որ մինչեւ ես չը
կամիմ ու դէպ 'ի Քեզ չը դառ-
նամ, մինչև չ'մեղանչելու խոս-
տում չընեմ, Քու սուրբ կամքդ
չեմ կրնար ստանալ : Սակայն
Տէր իմ, մարդկային տկարու-
թիւնը Քեզի անձանօթ չըլլա-
լուն համար՝ կ'աղաչեմ, օգնէ
տկարութեանս եւ այս անըս-
տուգութեան վիճակէս որոշած
փառքիդ վերածէ, որ հոն զՔեզ
օրհնելու արժանի ըլլամ : Ամէն :


Ա. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՀԱՐԻՆ ՄԷՋ
ԻԻՂԱՅԵՐԻՅ ՍԵՂԱՆԻՆ ԱՌՁԵԻ




ՏԵՐ ՅԻՍՈՒՆ ՔՐԻՍՏՈՍ, ԴՈՒՆ
որ վեշտերը փարատող և տրտու
մութիւնները մխիթարող բա
րերար Փրկիչ էս, ԳՈՒՆ որ իւ
ղաբեր ջերմեռանդ կանանց սրբ
տին սուգը փարատելու համար
լուսափայլ Հրեշտակիդ ձեռօք
ՔՈՒ փառաւոր Յարութիւնդ
աւետեցիր, ԳՈՒՆ որ պարտիզ
պանի կերպարանօք Մագդա
ղենացւոյն տարակուսութիւնը
լուծեցիր, կ'աղաչեմ Աստուած
իմ, հաճութիւն ունեցիր իմ

Ձի՛ ինդրէք զկենդանին ընդ մեռելս :

յուսահատութիւնս , տրտմու-
 թիւնս և սրտիս տխուր թախ-
 ծութիւնն ալ փարատելու . որ
 պէս զև փրկութեան և երանու-
 թեան արժանանալու յուսովը
 լցուած , ուրախութեամբ մեկ-
 նիմ՝ ասկէ եւ համարձակու-
 թեամբ Արարչիդ ոտքը դիմե-
 լու արժանի ըլլամ , եւ Քեզ
 փառք ու գոհութիւն մատու-
 ցանեմ յաւիտեանս յաւիտե-
 նից . Ամէն :



Ս . ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ
ԳԻՒՏ ԽԱՉԻ ՎՐԱՅ



Փայտ կենաց է ամենեցուն :

ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ուզին , որ ժար-
դուս սրտին մէջ տարրացած էր ,
չը հաճեցաւ զբեղ տանջելով՝
խաչելով և թաղելով , այլ քու
սուրբ Խաչը՝ որուն վրայ տա-
րածեցար և զոր անպարտ ար-
եամբդ օժեցիր , անհետացրնե-
լու համար հոս այս՝ քարայրին
մէջ թաղել տուաւ . որպէս զի
անոր միջոցաւ յայանուած սքան-
չելիքները խափանուին : Սափայն
Գլխայն Հեղինէ քու սուրբ սե-
րովդ վառուած՝ ջերմեռանդու-

Թեամբ եւ կատարեալ հաւատով իւր հոգւոյն թելադրութեամբը եկաւ և այն պատուական գանձը գտնելով՝ մարդկանց մոլութիւնն ու չարամտութիւնը յանդիմանեց :

Ես ալ նոյն անմիտ կիրքերով պաշարուած, նախանձու և ատելութեան ոգւով՝ այլոց բարեմասնութիւնները, երախտիքը, առաքինութիւնը և մարդկութեան օգտակար գործքերը վար զարնելով կը ջանամ խափանել. բայց անոնց արդեամբը միշտ կը յանդիմանուիմ ու չեմ խրատուիր. չեմ յիշեր բնաւ որ չը յայտնուած գաղտնիք մը չը կայ :

Արդ՝ Տէր իմ Յիսուս, հոգ-

ւոյս գեղեցիկ ձիրքերը՝ մոլութեանց ձեռքով կորստեան փոսին մէջ արգիլեցի, եւ հիմայ մերկացած այն վսեմ առաքինութիւններէն՝ որովք մարդկութիւնս կը սահմանուի, անպիտան ու անարգուած մնացի : Արարչապետիդ ձեռագործն ըսուելու պատիւէն զրկուեցայ. վատթար գործերովս ցածցայ, խոնարհեցայ և խայտառակ եղայ. եւ այս ամեն անարգութեանց մէջ կամաւս գլորեցայ. որոնցմէ փրկուելու և սրբուելու յոյսս Դու միայն ես, Տէր իմ Յիսուս, ու Քեզի կը վայելէ փառք իշխանութիւն և պատիւ յաւիտեանս. Ամէն :

ԱՂՕԹԻ Ի.

ՉԻԹԵՆԵԱՅ ԼԵՌԸ

ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՎՐԱՅ



Եւ վերանայր յերկինս :

Ո՞ր մահկանացուին մտքէն
արժանաւոր խօսք կրնայ ծնիլ
Քու յաղթութիւնդ ու փառքդ
դրուասելու Աստուած իմ Յի-
սուս . ո՞ր բերան վայելչապէս
կրնայ գովել Քու անձառելի
գործքերդ : Դուն՝ ո՞վ Տէր , ան-
քննելի խորհրդով Աստուա-
ծութիւնդ մարդկութեան հետ
միաւորելով իբր ակար մահ-
կանացու ծնար . աշխարհի մէջ
բնութենէ վեր վարքով մը կեն-
ցազաւարեցար , անբուժելի հի-

Լանդուծիւնները զօրութեամբ բժշկեցիր, մեռեալները ողջացուցիր, տրամեալները մխիթարեցիր և երջանկութեան ճամբան սորվեցուցիր :

Իսկ մարդիկ՝ Քու այսչափ բարեացդ փոխան ի՛նչ հատուցին, ո՛հ, սոսկալի ապերախտութիւն, կեանք տուողիդ կեանքը վերցնելու ճգնեցան, նախատեցին, չարչարեցին, խաչեցին, և վերջապէս թաղեցին. բայց Գուհօր զօրութեամբ յաղթութիւնը ընելէդ վերջը՝ անճառելի փառօք Գերեզմանէն ելար եւ յամառեալ չար մարդկանց բոլոր ակնկալութիւնը փուճը հանեցիր, Արդարոց և Սրբոց յոյսը պրակեցիր, և ՚ի լուսնի ամենայն

նի հոս այս Զիթենեաց լերան վրայ Առաքեալները օրհնեցիր, զօրացուցիր եւ անոնց առջեւ Աստուածային ինքնազօր զօրութեամբդ Համբարձար դէպ ՚ի երկինք Քու սկզբնական փառացրդ մէջ, ուր հիմայ նստած տիեզերքը կը խնամես : Օրհնեալ ես դու Աստուած իմ, մե՞ծ է Քու կարողութիւնդ, անճառելի է մարդասիրութիւնդ և սիրալի է նահատակութիւնդ, որուն վրայ Հրեշտակներն ալ զարմացած՝ մէկմէկու կը հարցընէին՝ թէ « Ո՞վ է այս փառաց թաղաւորը և զօրութեանց Տէրը, ի՛նչ է անոր հանդերձին սքանչելի կարմրութիւնը » . և այսպէս հիացմամբ յաւիտենից

դռները քու առջեւդ կը բանային :

Այսչափ մարգասիրական տընորենութիւններդ յիշելով կը հիանամ եւ կը պատկառիմ . որովհետեւ սիրոյդ անչափութիւնը կը անսնամ, և իմ կրիցս բռնութիւնը կը նկատեմ, և կը յիշեմ որ բոլոր պարտականութեանցս մէջ թերի գտնուեր եմ . փոխան սիրելու՝ ասեր եմ, կարեկցելու տեղ՝ անարգեր եմ, միտմարելու տեղ՝ վշտացուցեր եմ, և ոգորմելու տեղ՝ անգթաբար զրկեր եմ : Ուստի կ'ազաջեմ Տէր Աստուած բարութեանց, Աստուած սիրոյ եւ ողորմութեան, գթան մեղուցեալ թրջուստիս վրայ եւ գթութեամբ

ակնարկէ . սրբէ, փրկէ և մեռեալ հոգիս կենագործելով շնորհէ այն զորութիւնը, որով դէպ ՚ի Քեզ սլանալու կարող ըլլամ, եւ զՔեզ յաւիտեան փառաւորելու արժանաւորիմ . Ամէն :





Քանդի եղև վերստիտեալ :

ԱՂՕԹԻ ԻԱ.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՇԻՐՄԻՆ ՎՐԱՑ


ՏԻՐԱԾԻՆ կոյս, մայր սղորմու-
թեան՝ սուրբ Աստուածածին,
դուն որ այնչափ առաքինացար՝
մինչեւ բանին Աստուծոյ մայր
ըլլալու արժանացար. Սերով-
բէից անհպելին անձառապէս
ճնար. բոլոր տիեզերքը խնամող
անկարօտ Տէրը սնուցիր : Դուն
որ սուրբ Յովհաննէս Աւետա-
բանչի միջոցով բոլոր Գրիստո-
նէից մայր ըլլալու կոչուեցար,
վերջապէս դուն՝ Սրբուհի կոյս,
որ քու արժանաւորութեանդ


համեմատ յերկինս վերափոխեցար, անշուշտ հիմայ մեզ համար միջնորդելու գերադոյն պաշտօնն ունիս, և ես կը հաւատամ, Տիրուհի մայր, որ Քու աղաչանքդ մեր Փրկչին առջեւ խիստ ընդունելի է: այն Փրկչին՝ որ Քեզի հետ կը շրջեր, ու Քեզի հնազանդ կ'ըլլար. այն մարդասէր ու բարեխնամ Փրկչին կ'ըսեմ, որ Խաչին անտանելի ցաւոյ մէջ դժեղ չը մտցաւ. նոյն սիրոյ և գթութեան աղբիւրը, շնորհաց և ողորմութեան անսարաւ գանձարանը, հիմայ ալ Քու մայրական սիրոյդ համար միջնորդութիւնդ անտես չըներ:

Արդ՝ Տիրուհիս, անարատ մայր, կ'աղաչեմ, տարածէ թե-

ւերդ, խնդրէ, հայցէ եւ իմ փրկութեանս համար բարեխօսեղիք, և թէպէտ գիտեմ որ իմ մեղացս բազմութեամբը զըրկուած եմ ամեն շնորհքներէ, համարձակութիւն չունիմ բան մը խնդրելու: Սակայն Թագուհի երկնից, հոգւոյս կենսական պիտոյքը կըստիպէ զիս մերձենալ և Քու հաճոյական մաղթանացդ ու միջնորդութեանդ դիմել. ուստի մի մերժեր թշուառըս, գթան ողորմելոյս վրայ. անարատ կուսութեանդ, գթած մայրութեանդ և Յիսուսի չարչարանաց համար կրած վշտալիք ցաւոյդ յիշատակաւը կ'աղաչեմ ու կը թախանձեմ, յուսալով որ կը զեջանիս բարեխօ-

սել մեղացելոյս փրկութեանը
համար . որով արժանի ըլլամ
մեղաց թողութեան հետ՝ ժուժ-
կալութիւն , շնորհք և սրբու-
թիւն վարուց ընդունիլ , եւ
սուրբ Արքայութեան փառքը
վայելել . Ամէն :





Յիսուս Փրկիչ է օգնական :

ԱՂՈՐԳ ԻՔ .

ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄԷՆ
ՄԵԿԵՆԵԼՈՒ ԱՏԵՆ

Ո՛հ, ամենակարող Արարիչ տիեզերաց, ո՛վ անհուն բարու թիւն, ի՛նչ փառք եւ ի՛նչպէս գոհութիւն մատուցանեմ անարժան ջրթամբս, մեծ է քու գթութիւնդ, անչափ է մարդասիրական խնամքդ, անկշռելի եւ անփոխարինելի են առատ ու ձրի պարգեւներդ : Դուն, Աստուած իմ, որ ջրմերժեցիր Քանանացւոյն աղաչանքը, մի՛ մերժեր թշուառիս պաղատանքն ալ : Դուն՝ որ ընդունեցիր հարիւրա-

պետին խնդիրքը , հաճութիւն
ունեցիր նաեւ մեղապարտ ու-
ղորմելոյս հեծութեանը վրայ .
Դուն՝ որ Պրոպատիկէ աւազանին
մէջ երեսուն և ութ տարուան
անճարակ անդամայոյժին վրայ
գթացար , ողորմէ անգգայացեալ
խղճալոյս : Դուն՝ ամենակարող
Փրկիչ իմ Յիսուս , որ Մարիա-
մու եւ Մարթայի արտասուուաց
վրայ խանդազատելով՝ անոնց
չորս օրուան մեռած եղբայրը
կենդանացուցիր , կ'աղաչեմ ըն-
դունէ իմ ալ հառաչանքներս
ու արտասուքս , եւ բազմաժա-
մանակեայ մեռած հոգիս մեղաց
սպականութեան գուբէն հա-
նելով կենդանութիւն շնորհէ .
Փառք բեզ Փրկիչ եւ Արարիչ ,

գոհութիւն բիւր անգամ , որ
արժանի ըրիր զիս Քու Տնօրինա-
կան տեղէքդ գալու և անճառ
մարդասիրութեանդ . հրաշալի
գործերը տեսնելու , զորոնք
ինձ նման ապաշնորհ մեղաւո-
րին վրկութեանը համար գը-
թութեամբ հաճեցար կատա-
րել . օրհնեալ ես Դու Փրկիչ
իմ Յիսուս , օրհնեալ ըլլայ Քու
կամքդ :

Կ'աղաչեմ Տէր իմ , թշուա-
ռիս մեղաց թողութեան հետ
շնորհէ նաեւ զիս ատողներուն ,
թշնամիներուս , ինձի չար խոր-
հողներուն , չլգիտութեամբ զիս
բամբատողներուն յանցանքն ալ :
Ներէ անոնց կ'աղաչեմ , և մի
յիշեր այն բոլոր գեշ խորհուրդ-

ները , զորս ինձ համար կը խորհին . տո՛ւր անոնց ալ Տէր իմ , զգաստութիւն , բարեմտութիւն և սրտի մաքրութիւն , ողորմութիւն և շնորհքներուդ արժանի ըրէ զանոնք ալ : Ինչու որ Տէր իմ , գուցէ իմ անխոհեմ եւ գայթակղելի ընթացքովս տեղեւտուած և պատճառ եղած եմ անոնց մեղացը . ուստի իմ պատճառաւս ունեցած բոլոր մեղքերնին ալ մի յիշեր , եւ Քուսուրբ Արքայութեանդ անձառփառաց արժանի ըրէ ամենքն ալ :

Ահաւասիկ Տէր իմ Յիսուս ալ ժամանակն եկաւ որ մեկնիմ այս Սրբազան տեղերէն : Սակայն սիրտս ու հոգիս միշտ հոս պիտի ըլլան , և այս յիշատակը զիս

Քեզի հետ պիտի միացունէ . միայն թէ Աստուած իմ , Քուսնամոցդ ու շնորհացդ կը կարօտիմ . օգնէ տկարիս , որ չը մունալով առաջադրութեանս մէջ հաստատուն մնամ . պահպանող աջդ հովանի ըրէ վրաս ու փրկէ զիս բոլոր փորձանքներէն , որպէս զի խաղաղութեամբ հասնիմ իմ բնակարանս , և միշտ պատմելով ամենուն Ս . Երուսաղէմի մէջ մեզի համար ըրած անձառ երախտիքներդ , զՔեզ Հօր և Սուրբ Հոգւոյն հետ փառաւորեմ յաւիտեանս յաւիտենից . Ամէն :



ՅՈՒՅԱԿ

ԳՐՈՅ ՏՊԱԳՐԵԼՈՅ

ի Տղարանի

Առաքելական տնտեսչո Ս. Յակոբեանց

ՅԵՐՈՒՍԱԴԵՄ

Դր. Փր.

Ազնեո, Թարգմ. ՏՃ.	4
Աղօթագիրք Ս. Տեղեաց.	2
Ամեն ճարդոյ բարեկամը.	2
Անուրջը 'ի Սիօն .	1 20
Աշխարհագրութիւն Համ.	7
Աւետարան ամենափոքր, Ժողի .	8
Աւետարան առ ձեռն .	6
Աւետարան Ատենի .	30
Աւետարան Իզաբեղից .	20
Աւետարան ճաշու .	30

* Աստուանիւրէնէս գրեանք հաստատելու .

** Արեւոյ աստուանիւրէնէն աստատելու .

Փաստաւոր իստի գինն որելու .

	Ղ.Ն.	Փր.
Բանախօսութիւն .	1	
Բարոյական Պատմութիւնք .	7	
Բացատրութիւն Հրատարման և Զղջման, և Առաջօրեան երգոց Ծնորհաբանք **.		
Բովանդակութիւն Ազգ. սեպ. հականութեց 'ի Ս. Տեղեաց .	3	
Գագիկ արքայ Հայոց * .	5	
Գիրք խօսակցութեան .	2	
Գովասանք, Ս. Տեղեաց .	3	
Գործք Առաքելոց .	6	
Գործք Առաքելոց, ծոյ՛ի .	8	
Գործք ոսկեղնիկ Ս. Ռաբբի	3	
Դասագիրք Ընթերցանութեան	5	
Դասագիրք Թուադիտութեան	3	
Եղե՛շ պատմագիր .	7	
Երեւոյթ կրից * .	7	
Երկամեայ պանդխտութիւն 'ի Հասէշխատան .	20	
— Նոյնին Գաղղղերէնը .	20	
Երկու խօսք Եկեղեցականայ .	3	
Եփրեմ Թուրի, Գ. Տէր .	7	
Զանադանութիւն, Յ Հատոր .	40	

	Ղ.Ն.	Փր.
Ընդհանրական .	18	
Թանգարան խրատու, Գ. Տէր .	18	
Թախօրի տետրակ, Տարեկան **.		
— Նոյնն Եթեալիս .	4	
Ժամագիրք Առեւի .	30	
Ժամագիրք, Խոյրագիր .	20	
Ժամագիրք, Ծոյ՛ի .	16	
Խնդիր Ս. Տեղեաց * .	5	
Խորհրդածութիւն Ս. Պատա .	10	
Խորհրդատետր .	10	
” Նոր Տիպ .	15	
Կարգադր. առողջութեան .	5	
Կենսագր. Բաղբալայ * .	2	
Կտակագիր հոգեւա՛հ բանից .	6	
Կրթարան Աւետարանական բանից, Տ Տետր 'ի Մի կաղմ .	12	
Համաւոտ Գրիստոնէական .	4	
Հայեւի վերաց **.		
Հեղերէն, Խոյրագիր .		30
Հենրիկոս և Մարիամ .	2	20
Հրահանգ սիրոյ .	2	
Ղ երուբնա Եգեանացի .	3	
Ճաշոց գիրք .	300	

	Դ.Ն.	Փր.
Հառ Հաղորդութեան .	4	
Հառք Ժառանգաւորաց **.		
Հարտասանութիւն առ ձեռն	3	
Մատենագրութի նախնեաց *	6	
Մարթէոս Ուռհայեցի .	14	
Մաշտոց .	20	
Մարգարէական յարակցութի	1	20
Մեծն Ներսէս, Ողբերգութիւն **.		
Մեկն . թղթոյն Եփեսոսացոց .	23	
Մեկն . Յայտնութեան .	10	
Մենտոր մանկանց .	7	
Միխայէլ Ասորի .	16	
— Նոյնն՝ հանդերձ ծանօթութեամբ .	12	
Յովհ. Կաթողիկոս, Պատմ. .	10	
Յովսէփ զեղեցիկ .	10	
Նոր Թուազիտութիւն .		
Ա. Հատոր .	5	
Բ. Հատոր .	5	
Նոր Կտակարան .	12	
Նարեկ . Մեծադիր և Մոռի .	12	
Շարական Չայնրազ .	138	

	Դ.Ն.	Փր.
Ուխտ հայրենասիրի . Բ. Տէր .	1	
Ուսումն բարուց, Թարգմ. **.		
Ուսումն Պարտուց .	8	
Պատասխանիք Մխի . Քէնայի .	4	
Պատմութիւն Աղզային **.		
Պատմութիւն Եկեղեցական .	16	
Պատմ. Ս. Երուսաղէմի **.		
Պատմ. Ս. Ե՛էմի, Ուղղեցոյց .	3	
" " Նոր Տիպ .	8	
Պատմ. Թաթարաց .	2	
Պատմ. Լենկթիմուրաց .	10	
Պատմ. Հին Կտակարանի .	7	
Պատմ. Նոր Կտակարանի .	7	
Պատմ. Ս. Գրոց .	8	
Պատմ. Ս. Լուսաւորչի, ՏՃ .	3	
Սաղմոս . Խորագիր .	10	
Սաղմոս, Մեծադիր և Մե՛ռի .	6	
Սաղմոս, Մոռի .	8	
Սաղմոս, Փորագիր .	3	
Սանդուխտ, Ողբերգութիւն **.		
Սիրուն Ջրօսարան .	2	
Սինն Ամազգի, տարեկ. կաղմ .	30	
Ստորագր. Երուսաղէմի **.		

	Ղև	Փր.
Վահրամայ վարդապետ .	2	
Վարժութիւն փոխասաց մանկանց .	6	
Տաղարան .	15	
Տանվիլ ** .		
Տարեք իմաստասիրութիւն ** .		
Տեսչութիւն հովուական .	8	
Տիեզերագրութիւն, Բ. Տիդ .	8	
Տրամաբանութիւն, Դասա .	3	
Տօնացոյց .	10	
Քերական, Հայերէն .		20
Քերական, Հայ-Գաղղիերէն .	2	20
Քերականութիւն, Հայերէն .	4	
Քերականութիւն, Գաղղիերէն .	3	
Քրիստոնէական, Հայ-Արաբ .	2	
Օրացոյց .	1	
Օրացոյց ընդարձակ .	1	20



ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԵՐԵՍ


ԱՂՕԹԻ Ա. Սրբոյն Յակովբայ Տաճարին մէջ .	7
" Բ. Գլխադիր Ս. Յակովբ Առաքելոյն շիրմին վայ .	11
" Գ. Աւագ Սեղանին առջեւ, Տեառնեղօր շիրմին վայ .	15
" Դ. Ս. Յակովբայ Տաճարին մէջ, Սինէական Սեղանին առջեւ .	21
" Ե. Ս. Ծննդեան Տաճարին մէջ, Ծննդեան պրին վայ .	25
" Զ. Մտուրին առջեւ .	29
" Է. Գէթսեմանի պարտիզին մէջ, Քրիստոսի աղօթած տեղը .	33
" Ը. Դարձեալ Գէթսեմանի մէջ, Քրիստոսի բռնուած տեղը .	39

Ա. Ղ. Սթ. Բ.	Հրեշտակապետի վանք , որ Աննա Քաչանայա պետին տունն է և Յի- սուսի առաջին բանար .	
”	Ժ . Նոյն տեղը .	
”	ԺԱ . Ս . Փրկչայ վանք , Գրիս- տոսի երկրորդ բանտին մէջ , որ կայիսպիսի տունն է .	55
”	ԺԲ . Քրիստոսի երրորդ բան- տին մէջ , որ Պիղատո- սի ապարանքն է .	61
”	ԺԳ . Ս . Յարութեան Տաճա- րին մէջ , Քրիստոսի չոր- րորդ բանար .	67
”	ԺԴ . Ս . Յարութեան Տաճա- րին մէջ , Հանդերձ բա- ժանման տեղը .	75
”	ԺԵ . Ս . Յարութեան Տաճա- րին մէջ , Ս : Գողգո- թայի վրայ , Խաչելու- թեան առջեւ .	77
”	ԺԶ . Ս . Յարութեան Տաճա- րին մէջ , Պատանատեղ- ւոյն վրայ .	85

Ա. Ղ. Սթ. Բ.	Ս . Յարութեան Տաճա- րին մէջ , կենսատու Ս . Գերեզմանին վրայ .	89
”	ՅՍ	
”	ԺԸ . Ս . Յարութեան Տաճա- րին մէջ , Իւղաբերից Սեղանին առջեւ .	95
”	ԺԹ . Ս . Յարութեան Տաճա- րին մէջ , Գիւտ Խաչի վրայ .	97
”	Ի . Զիթենեաց լեռը , Ս . Համբարձման վրայ .	101
”	ԻԱ . Ս . Ատուածածնի շէր- մին վրայ .	107
”	ԻԲ . Ս . Երուսաղէմէն մեկ նեւու ատեն .	115
”	Յուշակ Գրոց Տպարանի Ս . Յակով- բեանց Երուսաղէմի .	119



118. ...
 117. ...
 116. ...
 115. ...
 114. ...
 113. ...
 112. ...
 111. ...
 110. ...
 109. ...
 108. ...
 107. ...
 106. ...
 105. ...
 104. ...
 103. ...
 102. ...
 101. ...
 100. ...
 99. ...
 98. ...
 97. ...
 96. ...
 95. ...
 94. ...
 93. ...
 92. ...
 91. ...
 90. ...
 89. ...
 88. ...
 87. ...
 86. ...
 85. ...
 84. ...
 83. ...
 82. ...
 81. ...
 80. ...
 79. ...
 78. ...
 77. ...
 76. ...
 75. ...
 74. ...
 73. ...
 72. ...
 71. ...
 70. ...
 69. ...
 68. ...
 67. ...
 66. ...
 65. ...
 64. ...
 63. ...
 62. ...
 61. ...
 60. ...
 59. ...
 58. ...
 57. ...
 56. ...
 55. ...
 54. ...
 53. ...
 52. ...
 51. ...
 50. ...
 49. ...
 48. ...
 47. ...
 46. ...
 45. ...
 44. ...
 43. ...
 42. ...
 41. ...
 40. ...
 39. ...
 38. ...
 37. ...
 36. ...
 35. ...
 34. ...
 33. ...
 32. ...
 31. ...
 30. ...
 29. ...
 28. ...
 27. ...
 26. ...
 25. ...
 24. ...
 23. ...
 22. ...
 21. ...
 20. ...
 19. ...
 18. ...
 17. ...
 16. ...
 15. ...
 14. ...
 13. ...
 12. ...
 11. ...
 10. ...
 9. ...
 8. ...
 7. ...
 6. ...
 5. ...
 4. ...
 3. ...
 2. ...
 1. ...



ՀՏԷՏԷՐՈՑ

2013/1
2001

« Ազգային գրադարան



NL0015157

